

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 1

2013թ. փետրվարի 5 -ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ.

1. Ավարտական աշխատանքների և ավարտական թեզերի կատարման ընթացքը ամբիոններում:
/Չեկ. ամբիոնի վարիչներ/
2. Կուրսային աշխատանքների ընդունման արդյունքները:
/Չեկ. ամբիոնի վարիչներ/
3. 2011/2012 ուստարվա սոցիոլոգիական հարցման արդյունքները:
/Չեկ. Ա.Գրիգորյան/
4. Ուսումնական պլանների և աշխատանքային պլանների կազմման ընթացքը ամբիոններում:
/Չեկ. Թ.Վարդանյան/
5. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի հաշվետվությունը 2011-2012 ուստարում կատարված աշխատանքների վերաբերյալ:
/Չեկ. Ա.Ավագյան/
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՅԻՆ – Ամբիոնի վարիչների հաղորդումը ամբիոններում ավարտական աշխատանքների և ավարտական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Նշեցին, որ ամբիոններում ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը կատարվում են, թեմաներն ընտրված են, բացառությամբ մեկի, որը դեռ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնում չի ընտրել իր հաշվետվության թեման, խոստացել է, որ շուտով կընտրի: ՕՀՀ որոնման և հետախուզման, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության, Երկրաֆիզիկայի, Ռեգիոնալ և պատմական երկրաբանության, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոններում խնդիրներ չկան: Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի 2 ուսանող դեռ չեն ներկայացրել թեմաները՝ ընտրելու համար: Հույս կա, որ նրանք էլ շուտով կընտրեն իրենց թեմաները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ամբիոններում նշանակել գրաֆիկներ շրջանավարտների խորհրդակցությունների համար:
2. Ամեն ինչ անել, որպեսզի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կատարվեն ժամանակին:

2. ԼՍԵՅԻՆ - Ամբիոնի վարիչների հաղորդումը ամբիոններում կուրսային աշխատանքների ընդունման արդյունքների վերաբերյալ: Ըստ ամբիոնների վարիչների հաղորդման ֆակուլտետի ուսանողների կուրսային աշխատանքները հանձնվել են ժամանակին: Աշխատանքները պաշտպանվում են հանձնաժողովով:

Ելույթ ունեցան - Ա.Պոտոսյան – Կան աշխատանքներ, որոնց հեղինակները իրենք չեն գրել իրենց աշխատանքները:

Ա.Գրիգորյան – Ցանկալի է, որ կուրսային աշխատանքները կազմվեն հատուկ ձևով, որոշակի ծավալով, գրականության ցանկով: Աշխատանքները պետք է կարդացվեն ղեկավարի կողմից, որը ցավոք սրտի ոչ բոլոր դեպքերում է լինում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Կուրսային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել հանձնաժողովներով:

2. Կուրսային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել մինչև քննշրջանի կազմակերպումը:

3. ԼՍԵՅԻՆ - Ա.Գրիգորյանի հաղորդումը 2011/2012 ուստարվա «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ: Ձեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ, «Դասախոսն ուսանողի աչքերով» գնահատման արդյունքները բավականին բարձր են

համալսարանի միջինից: Հարցման արդյունքներից պարզ է դարձել, որ կան ուսանողներ, որոնք քննություն են ստանում դրամ վճարելով կամ դասախոսի հետ պարապելու միջոցով: Այս փաստը մտահոգիչ է: Ըստ հարցման արդյունքների ուսանողները գոհ են՝

- դեկանից, դեկանի տեղակալներից և դեկանատի աշխատակազմից, ամբիոնի վարիչներից;
- նրանք բարձր են գնահատում դեկանատի աշխատողների և կուրատորների հանդիպումները ուսանողների հետ;
- ցանկանում են, որ ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունը երկարացվի, որի ընթացքում ուզում են անցկացնել արդյունավետ պրակտիկա:
- ցանկանում են, որ հետևեն բացակայությունների, որ դրանք մատյաններում ճիշտ գրանցվեն;
- նրանց հուզում է դասախոսների անկողնակալ գնահատման խնդիրը;
- ցանկալի է բարձրացնել ուսանողների կրթաթոշակը և դասախոսների աշխատավարձը, որը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն Ա.Գրիգորյանի հաղորդումը 2011/2012 ուստարվա «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ:

2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին ուշադրություն դարձնել, որպեսզի իրենց ամբիոններում կազմակերպվող քննությունները անցկացվեն օբյեկտիվ:

4. ԼՍԵՑԻՆ - Թ.Վարդանյանի հաղորդումը ամբիոններում ուսումնական պլանների և աշխատանքային պլանների կազմման ընթացքի վերաբերյալ: Նշվեց, որ մինչև մարտի 25-ը ամբողջ ուսումնական ծանրաբեռնվածությունները և պլանները պետք է կազմվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մինչև մարտի 25-ը կազմել ուսումնական պլանները, իսկ ապրիլի 25-ը պետք է կազմել աշխատանքային պլանները և ծանրաբեռնվածությունները:

5. ԼՍԵՑԻՆ - Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաշվետվությունը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 2011-2012 ուստարում կատարված աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ա.Ավագյանի գիտամանկավարժական գործունեությունը գնահատել բավարար:

2. Հանձնարարել ամբիոնի վարիչին ամբիոնում ստեղծել նորմալ աշխատանքային մթնոլորտ:

Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում ստեղծված էթիկայի ժամանակավոր հանձնախմբի՝ նախագահ՝ Վ.Պ.Վարդանյան (դեկանի տեղակալ), անդամներ՝ Մ.Մ.Թորոսյան (արիբյուրոյի նախագահ), Ռ.Ս.Մովսեսյան (ՕՀՀ որ. և հետախ. ամբիոնի վարիչ), սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնում անցկացրած աշխատանքների մասին եզրակցությունը:

Ելույթ ունեցավ հանձնախմբի նախագահ Վ.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆ. Մ.Մանասյանին տալ բանավոր նկատողություն, իսկ պրոֆ. Ա.Ավագյանին անել դիտողություն և պահանջել նրանցից այսուհետ ամբիոնում ստեղծել նորմալ աշխատանքային մթնոլորտ:

ԼՍԵՑԻՆ – Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Աշխարհագրություն» ամբիոնի հայցորդ Այսա Գագիկի Դիլանյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Աշխարհագրություն» ամբիոնի հայցորդ Այսա Գագիկի Դիլանյանի թեկնածուականատենախոսության թեման հաստատել «ՀՀ լանդշաֆտների սահմանների պատմական և ժամանակակից փոփոխությունների գնահատումը» վերնագրով:

2. Գիտական ղեկավար նշանակել աշխ. գիտ. դոկտոր Հովիկ Յախշիբեկի Սայադյանին:

ԼՍԵՑԻՆ – Հ.Ս.Եզակյանի «Երկրաբանահետախուզական հորատանցքերի հորատում» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

- ՈՐՈՇԵՑԻՆ – Հ.Ս.Եզակյանի «Երկրաբանահետախուզական հորատանցքերի հորատում» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ – Հ.Ս.Բալյանի, Ս.Ս.Այվազյանի և Գ.Ս.Բալյանի «Путешествие в Армению (учебное пособие по лингвострановедению)» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:
- ՈՐՈՇԵՑԻՆ – Հ.Ս.Բալյանի, Ս.Ս.Այվազյանի և Գ.Ս.Բալյանի «Путешествие в Армению (учебное пособие по лингвострановедению)» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ – Ա.Ավազյանի «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, մաս 3, Աֆրիկա, Ամերիկա, Ավստրալիա» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:
- ՈՐՈՇԵՑԻՆ – Ա.Ավազյանի «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, մաս 3, Աֆրիկա, Ամերիկա, Ավստրալիա» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ – Հ.Սարգսյանի և Ա.Գրիգորյանի «Շերտագրական ուսումնասիրությունների մեթոդները» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:
- ՈՐՈՇԵՑԻՆ – Հ.Սարգսյանի և Ա.Գրիգորյանի «Շերտագրական ուսումնասիրությունների մեթոդները» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ - Ս.Ս.Ներսիսյանի «Բնապահպանական հարցերն ընդերքօգտագործման ոլորտում» մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:
- ՈՐՈՇԵՑԻՆ - Ս.Ս.Ներսիսյանի «Բնապահպանական հարցերն ընդերքօգտագործման ոլորտում» մեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ – Սիներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի վարիչ Շ.Խաչատրյանի հաղորդումը ամբիոնի դոցենտ Ս.Առաքելյանի «Կիրառական երկրաքիմիա» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:
- ՈՐՈՇԵՑԻՆ – Սիներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի դոցենտ Ս.Առաքելյանի «Կիրառական երկրաքիմիա» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:
- ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «Ղևոնդ Ալիշան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Առաջարկվեց սերվիս բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Շամամ Վարդանի Գևորգյանի թեկնածությունը:
- ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով Շամամ Վարդանի Գևորգյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ «Ղևոնդ Ալիշան»-ի անվան կրթաթոշակը հատկացնել Շ.Վ. Գևորգյանին:
- ԼՍԵՑԻՆ - Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Գրիգորյանի հաղորդումը «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Առաջարկվեց երկրաբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Սարգիս Սոսի Մանուկյանի թեկնածությունը:
- ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով Սարգիս Սոսի Մանուկյանի ուսման գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվ գործունեությունը և գիտական խորհրդի անդամների դրական կարծիքը՝ «Տիգրան Ջրբաշյան»-ի անվան կրթաթոշակը հատկացնել Ս.Ս. Մանուկյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ